Հայաստան

Հայաստանի Հանրապետություն

Պետության ղեկավար՝ ***Արմեն Սարգսյան***

Կառավարության ղեկավար՝ ***Նիկոլ Փաշինյան***

Ադրբեջանի հետ ռազմական բախումը, որի ընթացքում երկու կողմերն էլ իրականացրել էին ռազմական հանցագործություններ և անխնա հարձակումներ էին գործել քաղաքացիական բնակավայրերի վրա, որոնց արդյունքում բազմաթիվ խաղաղ բնակիչներ զոհվեցին, վիրավորվեցին և տեղահանվեցին: Խոսքի և խաղաղ հավաքների ազատությունները սահմանափակվեցին արտակարգ դրության պատճառով, որը մտցվել էր COVID-19 համաճարակի դեմ պայքարի շրջանակներում և ռազմական դրության արդյունքում, որը հայտարարվել էր հակամարտության պատճառով: Շարունակվում էին նաև բնապահպանական ոլորտում արկա խնդիրների հետ կապված մտահոգությունները՝ Ամուլսարի ոսկու հանքի հետ առնչվող ցույցերի ֆոնին, երբ տասնյակ խաղաղ ցուցարարներ ձերբակալվեցին և տուգանվեցին:

Նախապատմություն

Սեպտեմբերի 27-ին ծանր մարտեր են բռնկվել Ադրբեջանի, Հայաստանի և հայկական կողմից աջակցվող Ադրբեջանից անջատված Լեռնային Ղարաբաղի ուժերի միջև: Նոյեմբերի 9-ին, Ռուսաստանի միջնորդությամբ կնքված զինադադարի համաձայնագրով, Հայաստանը զիջեց նախկինում գրված ադրբեջանական տարածքի մեծ մասը: Տարածաշրջանային մայրաքաղաք՝ Ստեփանակերտ/Խանքենդիի և վիճելի որոշ այլ հատվածներ շարունակում էն մնալ Հայաստանի կողմից աջակցվող դե ֆակտո իշխանությունների վերահսկողության տակ նաև կախված լինելով ռուս խաղաղապահներից պաշտպանությունից: Պատերազմում պարտությունն առաջացրեց քաղաքական անկարգություններ և վարչապետի հրաժարականի պահանջի, ներքաշելով երկիրը քաղաքական ճգնաժամի մեջ: Վարչապետի նստավայրի վրա հարձակման համար նոյեմբերի 12-ին ձերբակալվել էր 12 բողոքի ցույցի մասնակից անձ, իսկ խորհրդարանի խոսնակը հոսպիտալացվել էր բարկացած ամբոխի կողմից դաժան ծեծի ենթարկվելուց հետո:

Ըստ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակի՝ հակամարտության թեժ պահին շուրջ 90,000 էթնիկ հայեր տեղահանվեցին Լեռնային Ղարաբաղից դեպի Հայաստան, ինչն էլ ավելի վատթարացրեց COVID-19 համաճարակի արդեն իսկ ահավոր հետևանքները:

Դատական համակարգում և հակակոռուպցիոն ոլորտում խոստացված բարեփոխումները կանգ առան, մասամբ դրանց մասնատվածության և ինստիտուցիոնալ փոփոխությունները պահպանելու անկարողության պատճառով: Բարեփոխումների վրա ազդեցին նաև հակամարտությունն ու համաճարակը, որոնք երկուսն էլ խորտակեցին

տնտեսությունն ու առողջապահական համակարգը: Հիվանդանոցներն ու առողջապահության ոլորտը ծանրաբեռնված էին: Նրանք փորձում էին ապահովել համաճարակի և պատերազմի պատճառով հիվանդների աճող թվի խնամքը: Կառավարությունը սահմանափակ ֆինանսական օգնություն է տրամադրել աշխատանքը կորցրածներին և մանկահասակ երեխաներ ունեցող ընտանիքներին:

Անխտիր զրոհներ

Լեռնային Ղարաբաղի հակամարտության երկու կողմերն էլ խիտ բնակեցված քաղաքացիական բնակավայրերում գործի էին դրել ծանր զրահատեխնիկա՝ ներառյալ բալիստիկ հրթիռներ և ոչ ճշգրիտ հրթիռային հրետանային համալիրներ, որոնք էլ հանգեցրել էին խաղաղ բնակիչների շրջանում զոհերի, վիրավորների, ինչպես նաև լայնորեն վնաս էին հասցրել քաղաքացիական բնակավայրերին: Կան ստուգված ապացույցներ, որոնք ցույց են տալիս, որ երկու կողմերն էլ հոկտեմբերի 4-ին Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտի / Խանքենդի վրա, հոկտեմբերի 28-ին Ադրբեջանի կառավարության վերահսկողության տակ գտնվող Բարդա քաղաքի վրա հարձակումների ժամանակ օգտագործել է կասետային զինամթերք (տես Ադրբեջանի բաժնում[1]), ինչը արգելված է միջազգային մարդասիրական իրավունքով:

Պատերազմական հանցագործություններ

Լեռնային Ղարաբաղում հայկական ուժերը կատարել են մի շարք պատերազմական հանցագործություններ: Մի քանի ստուգված տեսանյութերում երևում էին հայկական կողմի վատ վերաբերմունքը ռազմագերիների և այլ գերիների նկատմամբ, ինչպես նաև թշնամու զինվորների դիակների պղծումը: Ներառյալ կար նաև տեսանյութ, որում երևում էր կոկորդը կտրած ադրբեջանցի սահմանապահի սպանությունը[2]:

Խոսքի և հավաքների ազատություններ

Խոսքի ազատության և խաղաղ հավաքների իրավունքները սահմանափակվում էին ամբողջ տարվա ընթացքում՝ առաջին անգամ մարտից սեպտեմբեր ընկած ժամանակահատվածում արտակարգ դրության արդյունքում՝ COVID-19-ի համաճարակի պատճառով, և այնուհետև սեպտեմբերից մինչև տարեվերջ՝ Ադրբեջանի հետ ռազմական գործողությունների պատճառով:

Արտակարգ դրության պայմաններում կառավարությունը, ի թիվս այլ սահմանափակումների, արգելեց նաև ավելի քան 20 հոգու մասնակցությամբ հանրային հավաքների կազմակերպումն ու համաճարակի հետ կապված խնդիրների վերաբերյալ «ոչ պաշտոնական տեղեկատվության» հրապարակումը: Իշխանությունները 20 լրատվամիջոցի ստիպեցին փոփոխել կամ ջնջել այն տեղեկությունները, որոնք

---

[1] *Armenia/Azerbaijan: First confirmed use of cluster munitions by Armenia 'cruel and reckless'* (News story, 29 October)
[2] Armenia/Azerbaijan: Decapitation and war crimes in gruesome videos must be urgently investigated (News story, 10 December)

պաշտոնյաները համարել են «խուճապի տարածմանը նպաստող» տեղեկատվություն: Տեղական և միջազգային իրավապաշտպան խմբերի կոշտ քննադատությունից հետո՝ ապրիլին, ՁԼՄ-ների նկատմամբ սահմանափակումները հանվեցին:

Ռազմական դրության պատճառով նոր սահմանափակումներ դրվեցին խոսքի և հավաքների ազատության իրավունքների վրա: Հոկտեմբերի 9-ին խորհրդարանը հաստատեց մի նախագիծ, որով արգելում է «ոչ պաշտոնական տեղեկատվության» տարածումը հակամարտության և ազգային անվտանգության հարցերի վերաբերյալ, ինչպես նաև հասարակական ցանկացած քննադատություն՝ ռազմական գործողությունների և պետական պաշտոնյաների կողմից արված հայտարարությունների վերաբերյալ:

Նոյեմբերին՝ զինադադարի հասնելուց հետո, ռազմական դրության սահմանափակումներ էին դրվել նաև խաղաղ հավաքների ազատության վրա՝ արգելելու վարչապետի հրաժարականը պահանջող հակակառավարական ցույցերը:

Բնապահպանական դեգրադացիա

Ապրիլ ամսին կառավարությունն առաջարկել էր օրենսդրական փոփոխություններ, որոնք թույլ կտան զերծ պահել այն տեղեկատվությունից, որը կարող է «բացասաբար ազդել շրջակա միջավայրի վրա»: Բնապահպանական ՀԿ-ները մտահոգություններ հայտնեցին, որ կառավարությունը ձգտում է նվազեցնել բնապահպանական խնդիրների վերաբերյալ թափանցիկությունը, որպեսզի տեղական համայնքների հաշվին օգուտ քաղեն հանքարդյունաբերության շահերից: Այս ամենը Հայաստանի հարավային հատվածում գտնվող Ամուլսարի ոսկու հանքի շուրջ շարունակվող լարվածության ֆոնին էր:

Տեղացիները 2018 թվականից փակում էին Ամուլսարի հանքավայրի մուտքը՝ բողոքելով, որ այն վտանգ է ներկայացնում շրջակա միջավայրի և նրանց ապրուստի միջոցների համար: Օգոստոսի 4-ին հարյուրավոր ակտիվիստներ հավաքվել էին Ամուլսարի լեռնահանքային օբյեկտում, այն բանից հետո, երբ ընկերության անվտանգության նոր աշխատակիցները բռնի կերպով հեռացրել էին տեղի բնակիչներին, ովքեր փակել էին հանքի մուտքը: Օգոստոսի 5-ին անվտանգության աշխատակիցների հետ բռնի առճակատումից հետո ոստիկանությունը ձերբակալեց 12 մարդու: Մայրաքաղաք Երևանում էլ ոստիկանությունը ցրել է միաժամանակյա բողոքի ցույցեր՝ ի պաշտպանություն բնապահպան ակտիվիստների՝ բերման ենթարկելով տասնյակ խաղաղ ցուցարարների: Ամուլսարում և Երևանում բերման ենթարկված բոլոր անձանց ոստիկանությանը չենթարկվելու համար տուգանել էին, ապա ազատ արձակել: